ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Օրակարգում ընդգրկված էին Հայ Եկեղեցու ներեկեղեցական եւ միջեկեղեցական կյանքին առնչվող մի շարք հարցեր:

Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը ժողովականներին ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Վրաստան կատարելիք այցելության նախապատրաստական աշխատանքները: Հունիս ամսին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի եւ Վիրահայոց թեմի թեմական խորհրդի հրավերով նախատեսված էր Վեհափառ Հայրապետի պաշտոնական այցը Վրաստան եւ Վիրահայոց թեմ: Այս առնչությամբ Եզնիկ Սրբազանը Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Վրաց Եկեղեցու պետի եւ Վիրահայոց թեմի թեմական խորհրդի խնդրանքով Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը հետաձգվել է հոկտեմբեր ամիս: Հոկտեմբերի 22-23-ին Նորին Սրբությունը հյուրը կլինի Իլիա Կաթողիկոս-Պատրիարքի, իսկ հոկտեմբերի 24-28-ը Հովվապետական այց կկատարի Վիրահայոց թեմ՝ Թբիլիսի եւ Ջավախք:

Գերագույն հոգեւոր խորհուրդը, արձանագրելով կրթական ոլորտում իրականացվող փոփոխությունները, անդրադարձավ նաեւ Հայաստանում օտարալեզու դպրոցների բացման հարցին: Քննության առնելով այս առնչությամբ առաջարկվող օրենսդրական նախաձեռնությունները եւ հասարակության մեջ առկա մտահոգությունները՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշեց հորդորով դիմել ՀՀ կառավարությանը՝ առավել գործուն քայլեր ձեռնարկելու գործընթացի հետ կապված խնդիրները շահագրգիռ անձերի եւ կազմակերպությունների հետ քննարկելու եւ մոտեցումներն առավել հստակեցնելու: Ստեղծվեց հանձնաժողով՝ գործընթացի մանրամասներն ուսումնասիրելու եւ առ այդ Գերագույն հոգեւոր խորհրդին զեկուցելու:

Ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ